կին տրամադրած պայմաններով վարժարան բանան ։

Սակայն չը մոռնանք դարձեալ յիշել՝ որ այս մասին իրաւասութիւն ունեցող մարմինը յանուն ամենայն Հայոց՝ Էջմիածնայ Կաթուղիկոսութիւնն է, որ իւր իրաւասութիւնը կը գործադրէ Ռուսիոյ՝ Անգղիոյ և Տաճկաստանի կառավարութեանց միջոցաւ՝ իբրև կառավարող տէրութիւնք ամենայն Հայոց ։

Օրագիր Թ. 1076. Հոկտ. 27.

ՆՈՒԷՐ

ԲԱՐՍԵՂ ՀԱԼԱՃԵԱՆԻ.

Մեծ. Հալաճեան Բարսեղ էֆէնտի այս շաբաթ ընկերակցութեամբ Մեծ. Գէորգ էֆէնտի Զարգարեանի Ազգ. Հիւանդանոցի վարժարանը այցելութիւն ընելով և զայն իւր արդի վիճակին մէջ գոհութեան և շնորհակալեաց արժանի լինելուն գործնապէս վկայելու համար՝ ամիսն 100 ղշ. ամսական թոշակ յատկացուց (բաց ի սովորական նուէրներէն որ տարին 10—20 ոսկի կը հանի), և այն պայմանաւ որ ցորչափ իւր գերդաստանը շարունակէ՝ նոյն ամսականն ալ շարունակէ։

Փափաքելի էր որ Մեծ. Հալաճեան էֆէնտիի սոյն ազգասիրական և արդիւնաբար այցելին և օրինակին հետևէին ուրիշ մեծատուն Ազգայիններն ալ։

Նոյն. Թ. 1072 Հոկտ. 25

Մեր ընթերցողաց յայտնի պիտի լինին Կ. Պօլսոյ Պատրիարքի իրաւասութեան ներքև եղած Ասորւոց ձգտումը, յորոց Հայք ոչ մի օգուտ չունենալէն զատ՝ և ոչ իսկ կարօտութիւն ունին և ստիպմունք կգործեն նոցա վերայ. ուստի միայն իբրև ժամանակակից անցք և տեղեկութիւն կյաւելումք հետևեալները հրատարակիլ, թէև սոցա մէջ հետաքրքրական և օգտաւէտ պարագաներ ևս կան մերազնեայ բանիմաց ընթերցողաց համար ։

ԱՍՈՐՒՈՑ ԽՆԴԻՐ

Լրագրոյս 829րդ թուոյն՝ Տիգրանակերտէն Ասորւոց վրայ տրուած տեղեկութիւն մը հրատարակած, և մեր կողմանէ ալ քանի մը խօսք աւելցուցած էինք։

Ասորւոց գեր. Կաթողիկոսին արժ. Փոխանորդըն՝ իբր պատասխանի յիշեալ յօդուածոյն՝ հետևեալ նամակը ղրկած է մեզ, որ արժանի է ուշադրութեան։

. . . Խմբագիր

Լրագրոյդ 829 թուոյն մէջ Տիգրանակերտէն եկած նամակի մը պարունակութիւնը հրատարակուած էր, որուն մէջ՝ Ասորիք իբրև թէ Արժ. Պետրոս Պատրիարքի Բ. Դռնէն Պատրիարքութեան հրովարտակ, և պատուոյ նշան ընդունած ըլլալուն՝ և Հայոց Պատրիարքարանի իրաւասութենէն ելած ըլլալնուն կը խօսէին եղեր . . . Խմբագի՛ր, դուք ալ ասոր վրայ դիտողութիւն ընելով այսպէս կըսէք, թէ՝ ,,Ասորիք իզուր կը խըռովին, որովհետև Բ. Դուռն դեռ այս մասին որ և է տնօրինութիւն ըրած չէ, թէպէտ և Ասորւոց Պատրիարքին կողմանէ առաջարկութիւն եղած է Բ. Դրան, բայց Հայոց Պատրիարքարանի և Բ. Դըրան մէջ խնդիրը մնաց ի կախ. բաժանման խնդիրըն ընող Պատրիարքին ընտրութիւնը վաւերացած չէ տակաւին, և կարծեմք Ասորւոց մեծագոյն մասն չեն ուզեր պատրիարքանալն ևըն. ,, Վերագրեալ նամակը իւր ստորոտը ստորագրութիւն չունենալուն, մեզ համար կարևորութիւն չունի, և փոքրամասնութեանց ալ մնալ մեզ անփոյթ, միայն գործոյն համառօտութիւնը ի գիր առնել ձեզ կը հաղորդեմ, որպէս զի այս խնդրոյն ներկատմամբ նամակ կամ որ և է գրութիւն մը եթէ հրատարակէք՝ արդարութենէ չըշեղէք։ Արժանապատիւ Պետրոս Պատրիարքի ընտրութիւնը, վաւերացումը և օծումը եղած, և բոլոր Ասորիք Պատրիարք ընդունած լմնցած խնդիր մ'է. անիկայ բնաւ տարակոյս չը վերցներ, և ասկէց յայտնի կերևայ թէ ձեզի տեղեկութիւն տուող նամակին հեղինակը կամ ինքը Ասորի չէ, կամ, եթէ է, ուրեմն մեր ազգի վրայ բնաւ գաղափար մը չունի եղեր. հօս արժան է ուրեմն պատմել ընտրութիւնը համառօտիւ

Արժանապատիւ Պետրոս Պատրիարք նախ իբրև ընտրելի, բոլոր Ասորի բնակեալ քաղաքաց մէջ հանրագրութիւններ ստորագրուելով՝ ամէն կողմէն բերուեցաւ ի Տիգրանակերտ, յետոյ՝ որ օծման արարողութիւնը եղաւ 15000 ժողովրդեան, տասը եպիսկոպոսաց, բազմաթիւ կրօնաւորացներկայութեանը, և Վալի փաշայի կողմանէ պաշտօնապէս տեղեկագրուեցաւ, նա և Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Խրիմեան Սրբազանի. թէ բարեխնամ կառավարութենէն և թէ Հայոց սրբազան Պատրիարքէն թէմլիքնամէներ հասան, որոնցմով իւրաքանչիւր որ իրենց խնամակցութիւնին կը յայտնէին։

. . . խմբագիր, կարծեմ այս կարճառօտ տեղեկութեանս վրայ ալ կը բարեհաճիք դուք ևս Պատրիարք ճանչնալ զայն։

Գալով ձեր դիտողութեան այն մասին թէ ,,Ասորւոց ողջամիտ մասը հակառակ են իրենց պատրիարքին Հայոց Պատրիարքարանի իրաւասութենէն ելլել ուզելուն,,՝ ասոր պատասխանը ձեզ կը թողում տալ, ,,բնականաբար,, ի անխտրոր օրինօք լուծել բարեհաճելու։ Այժմ մեր Պոլիս ճանապարհորդելուն վրայ ալ փոքր ի շատէ տեղեկութիւն մը տալով, գրութեանս վերջ կուտամ։

Մեր ժողովրդեան ողջամիտ մասը խնդրագիր մը մատոյց արժ. Պատրիարքին, որպէս զի Պոլիս երթալով՝ պատրիարքութեան հրովարտակ և տապանի մը փէրմանը ձեռք ձգէ, խոնարհեցաւ այս արդար պահանջման և հասանք ի Պոլիս։ Նախ և առաջ մեր պարտականութիւնը ճանչնալով՝ դիմեցինք ի Պատրիարքարանն Հայոց. հոս ցաւ ի սիրտ յայտնել պարտաւորեալ եմ, որ Արժ. Խրիմեան սրբազան Պատրիարքի կողմանէ ցուրտ ընդունելութիւն մը, և . . . առաջարկութիւն մ՚ալ եղած է։ Ահա ասկէ ետքը կսկսի մեր Բ. Դուռն ներկայանալը, որն որ բարձր. Խարիճիյէ միւշիրին, Երուսաղիմայ փոխանորդ Գեր. հօր հետ այս մասին տեսակցելէն զկնի, տեղւոյս լրագիրք ալ այլ և այլ մեկնութիւններ տուին, պատրիարքի ընտրութիւնը անվաւեր է *) ևլն. ըսելով. բայց Գերապատիւ Փոխանորդ հօր տրուած պատասխանը թէ բարեխնամ կառավարութիւնը, և թէ մեր ժողովուրդը չը կրնալ գոհացնելուն՝ մանաւանդ Տիգրանակերտէն, Մարտինէն, Թուրապտինէն, Մուսուլէն, Ուրֆայէն և այլ տեղերէ առ մեծ Եպարքոսն ուղղեալ հանրագրութիւններ հոս հասան, և մեզ անկ եղած պատասխանները և տեղեկութիւնները մեր կողմանէ տրուեցաւ։ Ուրախ եմ որ մեր այս թշուառ վիճակին մէջ չը մերժեց մեր ձայնը արդարասէր կառավարութիւնը, և արդարութիւնը ուշ կամ կանուխ անթերի գործադրելուն ալ ամենամեծ յոյսը մեզ տուաւ, որուն անձկանօք սպասել որոշուած է։

. . . խմբագիր, մենք որ այս տեղ օտարական, անպաշտպան և մեր արդար ձայնը լսելի ընելու համար ձեզի պէս շատ մը լրագիրներ չունինք, ուրեմն ինչո՞ւ անխղճաբար մեր այս խոցեալ սրտերը նորէն կը խոցէք։ Ամէն Ազգ յառաջադիմութեան շաւղին մէջ է, բայց մեր Ազգը տակաւին նոր կսկսի յառաջդիմութիւն աղաղակել. ո՞վ կը հաւատայ թէ այս մեծ ազգը տասն և իններորդ դարուն մէջ կապրի. պատմութիւնը աչքերնուդ առաջը բերէք, բոլոր ազգաց նախանձը շարժող Ասորւոց ազգին տղայքը, այսօր գիրք կը խնդրեն, օրիորդները դաստիարակութի՛ւն կաղաղակեն։ Ահա ասոնք են . . . խմբագիր, մեր խնդրածները, և կարծեմ ամէն ողջամիտ Հայեր ալ մեզ ասոնք կը բաղձան. ուստի մի՛ նեղէք զմեզ ո՜վ վեհանձն Հայեր, և եթէ կարելի է, օգնեցէք իսկ։ Այս ազգը ձեզ բնաւ թշնամի եղած չէ, և չպիտի ըլլայ յաւիտեան։

1873 Հոկտ. 16, Կ. Պոլիս

Փոխանորդ
Պատրիարքի Ազգին Ճախճի
Ասորւոց
ՏԷՐ ԴԱՒԻԹ
Փուն՝ Թ. 852 Հոկտ. 20.

Օ. այս հրատարակելէ զկնի՝ փունջն յաջորդ թուոյն մէջ կյաւելու հետևեալ դիտողութիւնքը։

Ասորւոց գեր. Կաթուղիկոսին արժ. փոխանորդին ստորագրութեամբ, լրագրոյս նախորդ թուոյն

(*) Հոս արժան կը համարիմ յիշատակել Մէճլիսի Խասին առ Պատրիարքն Ասորւոց ուղղեալ մեկ թէզքէրէի այլին մէջի առ տողը. ,,Պաթ. քէրրէ Մէճլիսէն ինթիխապ օլունան Պետրոս բաթրիգէ,, ևլն։

մէջ հրատարակեալ նամակն՝ անշուշտ տեսան ազնիւ ընթերցողք և կարդացին ուշադրութեամբ։

Ահա նոյն նամակին վրայ մեր դիտողութիւնները՝ կհրատարակեմք այսօր, ինչպէս խոստացանք։

Արժ. նամակագիրը պատմելով՝ Կաթուղիկոսին ընտրութեան ու օծման գործողութիւնը, և Բ. Դրնէն «Պու քէրէ մէճլիսճէ ինթիխապ օլունան Պետրոս բահիպէ» ասուած խօսքը մէջ բերելով, կուզէ այնպէս հրատարակել թէ ոչ միայն ժողովրդեան կողմանէ ընտրեալ, և ոչ միայն օծեալ է, այլ և կառավարութեան կողմանէ վաւերացուած է ընտրութիւնը։ Բայց ասոր բոլորովին հակառակն է։ Ասորւոց կղերին և ժողովրդեան կողմանէ բազմաստորագիր հանրագրեր կեցած են մեր Պատրիարքարան, որովք եղած ընտրութիւնը չեն ընդունիր, կրողքեն և կինդրեն որ մեր Պատրիարքարանը Բ. Դրնէն վաւերացման հրովարտակ հանել չտայ։ Ահա այս պատճառաւ է, որ վաւերացման գործը ետ մնաց։

Արդ՝ զարմանալի է, որ ժողովրդեան մէկ մասին կողմանէ ընտրեալն՝ փոխանակ ժողովրդեան մնացեալ մեծագոյն մասն սիրաշահելու՝ մեր Պատրիարքարանի դէմ կելնէ, նոր խնդիր կյարուցանէ, այս ինքն՝ Բ. Դրան գիմելով կպահանջէ որ Հայոց Պատրիարքարանի իրաւասութենէն ելնէ, և Բ Դրան հետ ուղղակի յարաբերութիւն ունենայ։ Ահաւասիկ, այս նոր խնդիրն բոլորովին ծանրացոյց վաւերացման խնդիրն. մէկ կողմանէ Բ Դուռը բանակցութեան մնաւ մեր Պատրիարքարանի իրաւասութեան տակ գտնուելուն պատճառաւ՝ այլ և այլ տեսակ և գլխաւորապէս Ս. Երուսաղէմայ մէջ եկեղեցական ժամերգութեանց համար մեր կողմանէ տեսակ ընդունած են, և հետևաբար եթէ արդարև բոլոր ժողովուրդը բաժանման կբաղձայ՝ նախ քան զամենայն, պէտք է քաշուին մեր սեղաններէն, որով կը դիւրանայ բաժանման խնդրոյն կարգադրութիւնը։ Այս տեղեկութիւնը հաղորդեց Բ. Դուռը՝ բաժանման խնդիրն յարուցանողին։

Հետևապէս անոր կմնայ, Ասորի ժողովրդեան ու կղերին ծանուցանել, որ հեռանան մեր սեպհականութիւնն եղող բոլոր սեղաններէն, և բաւականանան իրենց ունեցածներովը, որպէս զի առանձին ըլլան, և առանց որ և է միջնորդի յարաբերութիւն ունենան Բ. Դրան հետ։

Հայք, ինչպէս արժ. փոխանորդը կը վկայէ, վեհանձն են, ոչ զոք կբռնադատեն, որ իրենց Պատրիարքարանի իրաւասութեան տակ գտնուիլ. գտնուողը կյարգեն և կօգնեն անոր որչափ կտանի իրենց կարողութիւնը, բայց երբէք չեն կրնար հանդուրժել որ մէկը գայ իրենց քով, իրենց մարդասիրական շնորհները վայելէ, և յետ ժամանակաց փորձ փորձէ՝ իրենց շնորհները իւրացուցանել։

Ասորւոց կաթուղիկոսը գիտնալու է զայս։ Եթէ կկարծէ թէ բաժանման խնդիրն յարուցանելով՝ կյաջողի զինքն չուզող Ասորւոց ժողովրդեան աչքը ասով շլացուցանել, և իրեն յանկուցանել, կսխալի, որովհետև մեր ընդունած տեղեկութիւնները կվստահացուցանեն զմեզ թէ ժողովուրդը կը ցաւի բաժանման խնդրին իմանալով։ Մեք ողջամիտ կանուանեմք այս մասը, որովհետև կընկատեմք թէ գիտէ իւր օգուտը, գիտէ թէ Հայք վեհանձն ըլլալով ցարդ մեծարած են զիրենք և կմեծարեն, և միանդամայն նուիրական տեղեաց մէջ ընդունած և սեղաններ ու աթոռներ յատկացուցած են իրենց, և թէ բաժանման պատճառաւ պիտի զրկուին այս ամեն շնորհներէն։ Ողջամիտ մասը հարկաւ կգիտէ թէ բաժանումն վնասէ զատ օգուտ չունի, և բնականաբար բաժանման չբաղձար, և մինչև իսկ կհակառակի բաժանման խնդիր ծնողին։

Մեզ կմնայ հարցունել Արժ Նամակագրին, թէ վեհանձն Հայք երբ Ասորւոց արգելեր են, որ դաստիարակութեան և այլ այսպիսի յառաջադիմական գործոց համար չգանան։ Բազմիցս օգնած են իսկ, բայց իրենց կարողութեան չափովը։ Հայոց օտարասիրութիւնը հռչակուած է, և Ասորիք ապախտաւոր եղած կըլլան՝ եթէ չխոստովանին իրենց վայելած շնորհքն ու բարիքը։

* *
*

Մեր կողմանէ այսչափ խօսք՝ յիշեալ նամակին համար բաւական համարելով, մասնաւորապէս Խրիմեան Սրբազանի ուշադրութեան կյանձնեմք նամակին մէկ ակնարկութիւնը, որ ուղղակի Նորին Սրբազնութեան կվերաբերի, և եթէ ան-

պատասխանի մնայ՝ տուած գայթակղութիւնն ալ կմնայ յաւիտեան ։

Խրիմեան Սրբազան՝ որ մանաւանդ վերջին օրերս հրապարակ իջած է, և միանգամայն կյայտարարէ թէ իւր վրայ եղած որ և է ամբաստանութեան համար ի դատ խոնարհելու պատրաստ է, Ասորի փաստաբանին կողմանէ իւր դէմ եղած ծանր ամբաստանութիւնը կրնա՞յ անտեսել ։

Նոյն Թ. 833. Հոկտ. 24.

Բողոքական Միսիօնարաց (քարոզչաց) ամէն տեղ ի գործ դրած և մեր Եկղի դէմ լարած որոգայթից նկատմամբ ջանից և ճգանց վրայ մի գոյն գաղափար տալոյ համար՝ արժան կհամարենք հետևեալները հրատարակել Ամսագրոյս մէջ ։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻՍԻՕՆԱՐՔ.

Հետևեալ յօդուածին հրատարակութիւնը խնդրելով մեզնէ, պատասխանատուութիւնը հեղինակին վրայ թողլով կը հրատարակենք ։

Մեծապատիւ խմբագիր Մասիս լրագրոյ.

Ձեր մարդասիրութենէ կը խնդրեմ սա յետագայ մէկ երկու խօսքերը ձեր պատուական լրագրոյն միջոցաւ հրատարակել ի լուր արևելեան քրիստոնեայ աշխարհի ։

Այս Միսիօնարները որ մեր բնակած երկրին տակի կողմէն եկած են, որոնք Աւետարան, լուսաւորութիւն ու ազատութիւն քարոզելու պատճառանքներով մեր սիրոյն և համակրութեանցը տիրացած են անարժանաբար, բոլոր իրենց խոստմանցը հակառակ ներեր են ։

Ասոնք մասնաւոր աշխարհային նկատումներ՝ և ամենանուաստ նկատումներ ունին բոլոր իրենց աշխատութեանց մէջ ։

Ասոնք անձանձիր և կպճուռ պատերազմողներ են ։ Եւ երբ անգամ մը մէկուն հետ կռուի կըսկսին, ոչ անոր օձիքը թող կուտան, ոչ ալ քաջութեամբ իրենց ախոյեանին դիմացը կելլան ու քաջութեամբ յաղթելու կամ յաղթուելու յանձնառու կըլլան ։

Ինչպէս որ լրագիր կարդացողներուն յայտնի է, ասկից քանի մի տարի առաջ ասոնք Լանկայի բողոքական Հայոց հետ մեծ դժուարութեանց և գանեբու ինկան և ամէն անվայել գահճութիւններ ըրին ալ նէ, իրենց ալ շատ աժանի չեկաւ ։

Ասոր համար հարկ եղաւ, որ Ամերիկայէն գայ այն՝ որ իրենց ամէնէն վարպետ գործաւորն էր. որ եկաւ և բաւական խելացի որոգայթներ պատրաստեց և իր խնքովը քիչ մնաց որ իր որոգայթէն փախած Հայերը նորէն նոյն և աւելի զօրաւոր վարմի մը մէջ ձգէ ։

Աս միջոցին մենք ալ Ամերիկայէն կշտացած ըլլալով տունէրնիս եկած եղանք, և ինտոր որ է՝ մեր գոյութիւնը այդ լարուած որոգայթներուն յաջողութեանը արգելք նկատեր են ։ Ուստի մեզ բոլորապէս մեռցնելու և մէջ տեղէն վերցնելու համար ասդիէն անդիէն իրենց քանի մը արբանեկաց ստակ տալով Պոլիս կը ժողվեն, և հաւատաքննութեան ատեան մը կը կազմեն, ատենցնով և մեզ կհրաւիրեն որ գանք ու հաւատքնիս քննուի. և այդպիսի անշնորհք առաջարկութիւն մը ընելնուն պատճառ և իրաւունք հարցուած ժամանակ, գոհացուցիչ բան մը չկրնալ ըսելով՝ հիմակու հիմա ետ կը քաշուին ։

Արդ. ահաւասիկ այն դիւցազնական ասպարիզի հրաւէրը՝ որ քանիցս ըրած եմ և համարձակած չեն, դարձեալ անգամ մ'ալ կընեմ վստահ ըլլալով որ դարձեալ չը համարձակին, որովհետև քիչ շատ ինքզինքնին գիտեն ։

Եւ հրաւէրս սա է. խարդախ ճանբաները մէկդի. թէ որ Միսիօնարները երբէք կրօնքի և հաւատքի խնդիր ունին, թող իրենց և մեր ընտրութեամբը հրապարակ մը կազմուի, և հոն առաջին անգամ մեր հաւատքն ու աւետարանականութիւնը քննուի, ու ետքը իրենցը ։

Ահաւասիկ աշխարհի առջև կը խոստանամ, որ եթէ Միսիօնարք այսպիսի քննութեան մտնալու ըլլան, պիտի կարողանամ անդիմադրելի փաստերով հաստատել, որ փոխանակ ազատութիւն, լուսաւորութիւն և Աւետարան քարոզողներ ըլլալու, անհաւատութիւն և խաւարաբեր գերեվարութիւն մին է յառաջ տարածնին, և հետևապէս Պօրտ ընկերութեան ձեռնարկութիւնը որ